


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի մարտին


(վերլուծություն)

2016 թվականի մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 15303 գործարք, որոնց քանակը 2016 թվականի փետրվար ամսվա համեմատ աճել է 14.8 %-ով, իսկ 2015 թվականի մարտի համեմատ՝ 0.2%-ով:

2016 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4205 օտարման գործարքի 72.2 %-ը կազմել է առուվաճառքը, 27.2 %-ը՝ նվիրատվությունը և 0.6 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 34.7 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի մարտին, 2016 թվականի փետրվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքներն աճել են 7.9 %-ով, իսկ 2015 թվականի մարտի համեմատ՝ նվազել 2.1 %-ով:

2016 թվականի մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.3 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի մարտին, 2016 թվականի փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.1 %-ով, իսկ 2015 թվականի մարտի համեմատ՝ 2.3 %-ով:

2016 թվականի մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մարտ 2015 թ.	մարտ 2016 թ.	փետրվար 2016 թ.
<b>Կենտրոն</b>	428000	428000	428000
<b>Արաբկիր</b>	356600	357000	356900
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	282650	283000	283000
<b>Նոր Նորք</b>	253100	253950	253800
<b>Ավան</b>	260550	261500	261450
<b>Էրեբունի</b>	251900	252300	252300
<b>Շենգավիթ</b>	256950	257600	257500
<b>Դավթաշեն</b>	275700	276550	276500
<b>Աջափնյակ</b>	249750	250850	250750
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	243100	243950	243850
<b>Նուբարաշեն</b>	156600	157200	157150

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի մարտին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի փետրվարի համեմատ աճել են 0.02 %-ով:

2016 թվականի մարտին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 342 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի փետրվարի համեմատ աճել է 16.3 %-ով, իսկ 2015 թվականի մարտի համեմատ՝ նվազել 1.2 %-ով:

2016 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մարտ 2015 թ.	մարտ 2016 թ.	փետրվար 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116050	116050
	Ապարան	57650	58350	58250
	Թալին	65900	66700	66600
Արարատ	Արտաշատ	97750	98700	98600
	Մասիս	115800	115800	115800
	Վեդի	101150	101700	101600
	Արարատ	75950	77400	77300
Արմավիր	Վաղարշապատ	154100	154200	154200
	Արմավիր	121200	121250	121250
	Մեծամոր	87500	87600	87600
Գեղարքունիք	Սևան	99200	99400	99400
	Գավառ	60100	60500	60400
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	44800	45200	45150
	Ճամբարակ	28700	28750	28750
	Վանաձոր	88500	88600	88600
Լոռի	Ստեփանավան	74600	74750	74750
	Սպիտակ	99800	99850	99850
	Ալավերդի	55100	55700	55500
	Տաշիր	47300	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20300	20500	20500
	Աբովյան	155100	155150	155150
	Նոր Հաճն	128550	128550	128550
Կոտայք	Բյուրեղավան	108200	108250	108250
	Եղվարդ	109350	109750	109650
	Հրազդան	63800	63900	63900
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
	Գյումրի	109200	109350	109350
	Արթիկ	66700	67200	67100
Շիրակ	Մարալիկ	40700	41000	40950
	Գորիս	122950	123600	123500
	Կապան	93700	94900	94750
Սյունիք	Սիսիան	91800	92100	92100
	Մեղրի	81500	82900	82800
	Ագարակ	47200	47700	47600
	Քաջարան	94600	94750	94750
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայք	94900	95100	95100
	Եղեգնաձոր	125500	126150	126050
Վայոց ձոր	Ջերմուկ	112900	113200	113100
	Դիլիջան	113900	115300	115300
	Իջևան	118350	118550	118550
Տավուշ	Բերդ	60200	60450	60400
	Նոյեմբերյան	49850	50350	50300
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի փետրվարի համեմատ աճել են 0.1 %-ով:

2016 թվականի մարտին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 363 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 93 գործարք, մարզերում՝ 270 գործարք: 2016 թվականի մարտին, 2016 թվականի փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 1.4%-ով, ընդ որում, Երևանում՝ նվազել 14.7 %-ով, իսկ մարզերում՝ աճել 8.4 %-ով: 2016 թվականի մարտին 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 12.1 %-ով, ընդ որում, Երևանում՝ 19.1 %-ով, իսկ մարզերում՝ 9.4 %-ով:

2016 թվականի մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մարտ 2015 թ.	մարտ 2016 թ.	փետրվար 2016 թ.
<b>Կենտրոն</b>	476100	476100	476100
<b>Արաբկիր</b>	383000	383000	383000
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	295000	295000	295000
<b>Նորք-Մարաշ</b>	319200	319200	319200
<b>Ավան</b>	270500	270500	270500
<b>Էրեբունի</b>	239750	239750	239750
<b>Շենգավիթ</b>	255000	255000	255000
<b>Դավթաշեն</b>	276000	276000	276000
<b>Աջափնյակ</b>	250050	250050	250050
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	238000	238000	238000
<b>Նուբարաշեն</b>	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի մարտին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի փետրվարի համեմատ մնացել են անփոփոխ:

2016 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մարտ 2015 թ.	մարտ 2016 թ.	փետրվար 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200

	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41150	41100
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100900	100800
	Ստեփանավան	90000	91200	91100
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157300	157300
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	119250	119250
	Արթիկ	63100	63450	63350
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100650	100650
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84600	84600
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90150	90150
	Եղեգնաձոր	116600	116750	116750
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	115550	115400
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի փետրվարի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի մարտին հանրապետությունում օտարվել է 1630 միավոր (894.80 հա) հող, որից Երևանում՝ 106 միավոր (7.06 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 968 միավոր (832.31 հա), որից Երևանում՝ 8 միավոր (1.64 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 376 միավոր (31.66 հա), որից Երևանում՝ 53 միավոր (2.87 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 175 միավոր (20.28 հա), որից Երևանում՝ 43 միավոր (2.46 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 13 միավոր (8.61 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.09 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 4 միավոր (0.99 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 93 միավոր (0.95 հա).
- ջրային հող՝ 1 միավոր (0.002 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի մարտին հանրապետությունում օտարված հողերից 1336 միավորի (775.15 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 68 միավոր (2.92 հա), նվիրատվության գործարք՝ 287 միավորի (118.08 հա), որից Երևանում՝ 32 միավոր (3.85 հա) և փոխանակության գործարք՝ 7 միավորի (1.58 հա), որից Երևանում՝ 6 միավոր (0.29 հա):

Հանրապետությունում 2016 թվականի մարտին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 10.6 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 19.4 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 1.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 42.9 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 218.26 հա, որից 214.24 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 31.4 %-ը կամ 420 միավորը (219.67 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 21 միավոր (0.50 հա), իսկ 68.1 %-ը կամ 910 միավորը (555.35 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 47 միավոր (2.42 հա): 2016 թվականի մարտին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 6 գործարք /0.13 հա/:

Ստորև ներկայացված է 2016 թվականի մարտին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	1	0.08	4	0.25	16	0.16	2	0.31	1	0.01	25	1.00	19	1.11
Արագածոտն	57	28.71	0	0.00	3	0.21	23	1.33	55	28.18	0	0.00	30	2.44	2	0.56
Արարատ	21	44.88	0	0.00	13	0.82	0	0.00	94	169.36	0	0.00	36	2.91	6	0.17
Արմավիր	8	13.87	2	0.13	2	0.01	2	0.06	77	77.03	1	0.02	42	3.89	4	0.13
Գեղարքունիք	0	0.00	2	0.39	2	0.08	9	1.12	32	38.10	0	0.00	17	2.38	2	0.03
Լոռի	3	1.73	1	0.02	4	0.05	6	3.69	129	57.98	0	0.00	3	0.47	1	0.03
Կոտայք	16	38.71	1	5.40	24	0.07	12	0.74	99	53.70	2	1.26	39	3.33	10	4.99
Շիրակ	28	10.58	0	0.00	7	1.87	27	1.40	52	35.96	0	0.00	17	2.05	5	0.11
Սյունիք	3	14.37	0	0.00	7	0.05	0	0.00	51	34.67	0	0.00	5	1.03	1	0.13
Վայոց ձոր	8	2.81	0	0.00	1	0.03	2	0.04	24	23.60	0	0.00	1	0.11	2	0.04
Տավուշ	9	45.00	0	0.00	1	0.03	1	0.01	12	7.30	1	0.004	8	0.68	2	0.004
Ընդամենը	153	200.66	7	6.02	68	3.47	98	8.55	627	526.19	5	1.29	223	20.29	54	7.30

Ստորև ներկայացված է 2016 թվականի մարտին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	14	0.34	1	0.08	3	0.19	10	0.07	7	0.15	0	0.00	0	0.00	1	0.06	6	0.09
Արագածոտն	22	1.50	0	0.00	1	0.21	21	1.29	13	3.504	9	3.46	0	0.00	2	0.004	2	0.04
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	34	45.70	21	44.88	0	0.00	13	0.82	0	0.00
Արմավիր	3	0.07	0	0.00	2	0.01	1	0.06	11	14.001	8	13.87	2	0.13	0	0.00	1	0.001
Գեղարքունիք	2	0.62	1	0.35	0	0.00	1	0.27	11	0.98	0	0.00	1	0.04	2	0.08	8	0.86
Լոռի	3	0.006	0	0.00	1	0.001	2	0.005	11	5.49	3	1.73	1	0.02	3	0.05	4	3.69
Կոտայք	24	0.07	0	0.00	23	0.06	1	0.01	29	44.85	16	38.71	1	5.40	1	0.01	11	0.73
Շիրակ	28	3.16	0	0.00	5	1.86	23	1.30	8	6.35	2	6.23	0	0.00	2	0.01	4	0.11
Սյունիք	6	0.01	0	0.00	6	0.01	0	0.00	4	14.41	3	14.37	0	0.00	1	0.04	0	0.00
Վայոց ձոր	2	0.04	0	0.00	0	0.00	2	0.04	9	2.84	8	2.81	0	0.00	1	0.03	0	0.00
Տավուշ	1	0.03	0	0.00	1	0.03	0	0.00	10	45.01	9	45.00	0	0.00	0	0.00	1	0.01
<b>Ընդամենը</b>	<b>105</b>	<b>5.85</b>	<b>2</b>	<b>0.43</b>	<b>42</b>	<b>2.37</b>	<b>61</b>	<b>3.05</b>	<b>147</b>	<b>183.28</b>	<b>79</b>	<b>171.06</b>	<b>5</b>	<b>5.59</b>	<b>26</b>	<b>1.10</b>	<b>37</b>	<b>5.53</b>

2016 թվականի մարտին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 74 գործարք (29.61 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի մարտին, 2015 թվականի մարտի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 5.1 %-ով: Ընդ

որում, Երևանում նվազել է 50.0 %-ով, իսկ մարզերում՝ 0.7 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 3.0 անգամ, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 69.4 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 2.6 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 37.5 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի մարտին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	7	3.16	82.7	773.5	367.0	29	8.50	365.0	12000.0	3542.5
Ապարան						4	1.96	86.5	2727.3	635.5
Թային						19	14.02	93.6	5494.5	776.2
Ծաղկահովիտ	2	0.30	517.8	522.5	520.1	3	3.69	79.5	1000.0	380.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	14	1.53	854.5	1068.8	1041.0	37	17.53	335.1	10833.3	2690.2
Մասիս	4	41.15	59.5	78.6	64.5	17	27.62	200.0	11904.8	3190.0
Վեդի	3	2.20	163.6	468.3	292.1	40	124.21	207.0	10795.1	1965.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	1.00	63.0	63.0	63.0	33	28.32	294.3	9090.0	1326.3
Բաղրամյան						19	39.01	90.6	2561.1	925.0
Վաղարշապատ	7	12.87	29.0	600.0	195.8	24	9.39	444.4	11764.7	1976.5
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						14	6.53	199.8	1875.0	493.5
Ճամբարակ						1	0.32	60.5	953.3	352.0
Մարտունի						6	1.01	51.1	2850.0	790.0
Սևան								52.2	2134.8	355.0
Վարդենիս						11	30.24	41.2	2575.1	410.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	2	0.71	2442.0	2561.8	2501.9	4	4.43	170.4	6424.2	580.0
Գուգարք						6	3.85	234.6	6065.9	815.0
Սպիտակ								250.0	5555.5	675.0
Ստեփանավան	1	1.02	123.9	123.9	123.9			90.6	1686.6	418.5
Տաշիր						119	49.69	45.3	1384.4	185.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Արովյան	11	30.55	69.5	695.0	212.3	19	5.75	279.3	11942.7	3915.0
Եղվարդ	5	8.16	213.0	242.1	227.9	60	35.04	174.4	11971.8	2510.0
Հրազդան						19	12.81	130.5	10256.4	1023.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	1	5.08	103.5	103.5	103.5	21	16.07	252.0	1693.1	647.9
Ամասիա								40.9	261.0	136.5
Անի	1	1.15	93.0	93.0	93.0	18	11.02	110.6	546.9	455.3
Աշոցք						1	0.02	58.5	215.8	138.5
Արթիկ						12	8.85	79.4	1428.6	522.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								92.6	1023.2	787.5
Կապան						25	16.92	120.0	841.6	430.0



Մեղրի	2	14.15	77.0	276.9	176.9	16	7.89	193.0	3000.0	790.0
Սիսիան	1	0.22	133.9	133.9	133.9	10	9.86	46.3	1977.4	595.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	8	2.81	47.5	252.7	86.8	19	13.40	125.0	10000.0	1734.1
Վայք						5	10.21	58.8	1430.7	585.0
Տավուշի մարզ										
Բերդ						11	6.92	213.3	3783.8	690.0
Իջևան	9	45.00	1039.5	1039.5	1039.5	1	0.38	267.5	9454.5	1500.0
Նոյեմբերյան								46.7	7368.4	985.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի մարտին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	42.0	4428.6	4571.4	4500.0	19	14405.0	130.7	22200.0	2592.3
Ապարան						2	1930.0	124.1	609.6	390.0
Թային						8	5937.3	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	2140.0	60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ	4	3846.0	802.9	851.0	838.8	7	6188.2	173.9	7140.3	906.7
Մասիս	9	4397.7	801.4	3705.3	2225.9	15	9762.0	187.5	25000.0	1208.5
Վեդի						14	13148.0	126.1	5000.0	663.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						13	13005.0	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան						2	2400.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						26	22382.0	197.4	26528.4	1530.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	2030.0	186.6	1084.3	683.6
Ճամբարակ						1	1154.0	71.3	2286.2	146.8
Մարտունի	1	648.0	376.2	376.2	376.2	11	15139.0	119.3	5000.0	281.5
Սևան								240.0	3110.4	335.0
Վարդենիս	1	140.0	1200.0	1200.0	1200.0	3	5502.5	72.5	987.2	150.4
Լոռու մարզ										
Ալավերդի	2	50.4	1650.0	2200.0	1925.0	2	2970.0	114.3	1388.9	217.0
Գուգարք	1	406.5	197.5	197.5	197.5	1	1714.0	77.9	14083.3	1260.3
Սպիտակ								104.9	1348.3	202.0
Ստեփանավան								88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	97.2	4976.4	4976.4	4976.4	12	9129.1	264.5	35353.5	1958.3
Եղվարդ						24	21274.0	173.6	27000.0	2859.7
Հրազդան						3	2920.0	117.7	34848.5	1318.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	74.45	2820.7	2820.7	2820.7	4	5461.2	113.6	18750.0	335.4
Ամասիա								45.3	274.7	72.0

Անի	1	31.5	1797.8	1797.8	1797.8	9	11395.6	67.9	180.6	205.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						4	3610.0	111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	3989.0	112.2	1700.0	367.4
Կապան								67.9	2638.9	355.0
Մեղրի	1	408.0	303.8	303.8	303.8	1	990.0	68.5	632.9	270.0
Սիսիան						1	5300.0	123.5	875.0	250.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	340.0	1655.9	1655.9	1655.9	1	1100.0	96.7	7659.6	507.7
Վայք								120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	571.0	75.8	810.0	125.3
Իջևան						7	6238.8	74.1	14423.1	513.0
Նոյեմբերյան								125.0	1948.1	252.0

2016 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 705 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.6 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 77.7 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2016 թվականի մարտին, 2016 թվականի փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 2.0 %-ով, իսկ 2015 թվականի մարտի համեմատ՝ 2.5 %-ով:

2016 թվականի մարտին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 60 բնակարանի, 44 անհատական բնակելի տան, 318 հասարակական և 71 արտադրական նշանակության օբյեկտի, 193 հողի, 18 ավտոտնակի և 1 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի մարտին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 3 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի փետրվարի համեմատ նվազել է 25.0 %-ով, իսկ 2015 թվականի մարտի համեմատ՝ 57.1 %-ով:

2016 թվականի մարտին հանրապետությունում վարձակալված 464.96 հա հողից 0.13 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 464.82 հա հողից 395.25 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 0.15 հա արդյունաբերական օբյեկտի, 0.81 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Լոռու մարզում՝ 128.81 հա, որից 80.97 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1785 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 11.7 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի փետրվարի համեմատ, աճել է 21.1 %-ով, իսկ 2015 թվականի մարտի համեմատ՝ 13.8 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (52.0 %), անհատական բնակելի տների (22.7 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.4 %) և հողերի (10.1 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 936 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016

թվականի փետրվարի համեմատ աճել է 17.7 %-ով, իսկ 2015 թվականի մարտի համեմատ՝ 7.2 %-ով:

2016 թվականի մարտին հանրապետությունում գրավադրվել է 714.52 հա հող, որից 7.54 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 98.7 %-ը կամ 705.11 հա գյուղատնտեսական նշանակության, որից 1.83 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 605.44 հա, որից 604.73 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի մարտին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 137 գործարք: 2016 թվականի մարտին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի փետրվարի համեմատ, աճել է 22.3 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 18.1 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 97 գործարք, որը 2016 թվականի փետրվարի համեմատ աճել է 9.0 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 7.8 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի փետրվարի համեմատ, աճել է 73.9 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 53.9 %-ով:

2016 թվականի մարտին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 2004 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2016 թվականի փետրվարի համեմատ, աճել է 25.7 %-ով, իսկ 2015 թվականի մարտի համեմատ՝ 11.4 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 13.1 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (22.3 %):

**«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**